# Սևծովյան առևտրային ցանց

## Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| *Ոլորտ՝* | Առևտուր |
| *Տևողություն՝* | 18 ամիս |
| *Իրականացման ժամանակահատված՝* | հունիս 2011 – նոյեմբեր 2012 |
| *Ընդհանուր բյուջե՝* | 379.975 եվրո |
| **ՀՀ շահառու հաստատություն՝** | Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն |
| **Մասնակից երկրներ՝** | Բուլղարիա, Ռումինիա, Մակեդոնիա, Հայաստան, Հունաստան, Թուրքիա |

## Ծրագրի նկարագրություն

***Ընդհանուր նպատակը՝*** Խրախուսել և աջակցել ներտարածաշրջանային գործընկերությանը և անդրսահմանային տնտեսական համագործակցությանը՝ Սևծովյան ավազանում կայուն զարգացման ապահովման նպատակով՝ հիմնվելով ընդհանուր ռեսուրսների, գործողությունների և ընդհանուր շահերի ցանցերի վրա:

***Ձեռք բերված արդյունքները՝***

- Ծրագրի մասնակից 5 երկրների (Ռումինիա, Հայաստան, Հունաստան, Բուլղարիա, Թուրքիա) առևտրատնտեսական միջավայրի վերլուծության հիման վրա մշակվել է Սևծովյան Ավազանի կոմերցիոն քարտեզը,
- Ձևավորվել է տեղեկատվական ինտերնետային կայք (http://www.blackseatradenet.eu/), որն իր մեջ ներառում է գործարար համագործակցության առաջարկների առցանց հիմնապաշար,
- Անցկացվել են Սևծովյան ավազանում համագործակցության խթանման 7 համաժողովներ՝ ծրագրի մասնակից 5 երկրներում, որոնց ընթացքում տվյալ երկրի գործարարներին է ներկայացվել ծրագրի մասնակից երկրների գործարար միջավայրը,
- Կազմակերպվել են գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ՝ ծրագրի մասնակից 5 երկրների փոքր և միջին ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ,

- Ձևավորվել է Սևծովյան առևտրային ցանց՝ տեղական գործարար համայնքին համապատասխան գործարար տեղեկատվությունը և ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով:

## Հավելյալ տեղեկատվություն

Սևծովյան առևտրային ցանց (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/20120723-Priority-1-BST-113.pdf)